

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԻՍՏԻԿԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍՏԱՆՆԵՐ

2 րիւ մեկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆ

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60
Վեցամսեայ 1.50

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուկան տղոք
20 տարեկալ



ԻՐԱՎԱԿԱՆ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Roy Père G. Kalemkarian Michitaris
te угасее N 4 Vienne

ՀԱՍՏԻ

Rédaction du journa

„Iravounk“

V A R N A (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեն տրուիր

ԿԱՐԳԸ ՌՈՒՍՃՈՒՔՅՈՒՆԵՐՈՒՆ Է

Այս անգամ դարձեալ որբերով զբաղուելու առիթը կուտայ մեզ Արեւելեան խումբին նամակը, զոր իրաւունքը հրատարակեց նախընթաց թիւով:

Նախ ներուի մեզ անցողիկի րսել թէ Արեւելեան խումբը երբ մեր նախորդ յօդուածներէ մէկուն ակնարկելուց ետք, զերտաւորութեամբ հոգեկան վիճակը՝ իրենց կատարած գերբերովը չը չափելու անհարկի քարոզը կը կարգայ, ցոյց կուտայ իր խորունկ անհասկացողութիւնը մեր գրածներու նկատմամբ:

Առանց ծանրանալու, ուսումով մը անցնելէ առաջ այս կէտին վերայէն, անկարելի է ինծի գոնէ սա պարզ յանձնարարութիւնը չը ներ իրեն, որ աւելի ուշագրութիւն ընէ իր կարգաւորներուն:

Ու յետոյ Արեւելեան խումբը պատճառ չունի միշտ ողբալու մօտիկ անցեալը, ուր ինքզինքը գործաւ վառնայի Որբախնամին տըրամադրութեանը ներքեւ, ու այս վերջինին համար կտրելի չեղաւ օգտուիլ իր բարեացակամութեանէն:

Թէ ինչո՞ւ: Այդ «ինչո՞ւ» միշտ պրպտել կը նշանակէ պահած ըլլալ հուր, զոր զգացեր է և որուն նայքան երկար ժամանակեայ զոյլութիւնը պատիւ չը բերեր երբեք իր ցոյց տալուց օրբասիրութեանը:

Ասպարէզը կայ ու կը մնայ բաց, ուր կարող է ինք պայծառապէս ապացուցանել իր զգացումներուն անկեղծութիւնը:

Ռուսնուք՝ համեմատօրէն աւելի հարուստ քաղաք մը, իր ամեն որբասիրական թուրքներուն գոհացում տալու միակ միջոցըն է, ուր կրնայ ինք՝ եթէ ուզէ, շատ բան ընել ինչպստ որբին ու միակնոյն տանձ՝ իր նորակազմ խումբին համար ու ապահովել լաւագոյն անուն մը:

Մէկ քարով երկու թռչուն դար ներու այս գերազանցապէս զեղեցիկ առիթը ներկայացած է ահաւասիկ իրեն:

Ռուսնուք ու ունի Որբախնամ ու որբի խումբ եւ, Ռուսնուք ալ կը պահէ տաս տասներկու որբեր իրենք գերասան ըլլալէ տալ, մարդ, ու հայ մարդ ըլլալով, կրնան քիչ մըն ալ գերասանի կը ճեպէն գուրս ելլել և չփոխելով Որբախնամին հետ վերջապէս կազմակերպել երեկոյթ մը՝ ուր կարող ըլլան իբր հայ իրենց պարտքը կատարած ըլլալու խղճի գոհունակութեամբ փայլեցնել նաեւ իրենց գերասանական տրուածը:

Ինչ որ ալ ըլլայ զոհողութեան չափն ու աստիճանը, չեմ կարծեր սակայն որ Արեւելեան խումբը ընկճի անոնց տալիս: Պէտք է խոստովանել, որ իր տրամադրութիւնները միշտ լաւ եղած են զէպի որբերը:

Այն ատեն պարտքը կը ծանրանայ Ռուսնուքի Որբախնամին վերայ:

Ղառնան՝ երեկոյթով մը յաջողեցաւ իր պահած որբերու թիւը, տասներկուքէն տասներկուքի բարձրացնել: Ինչո՞ւ միեւնոյն խումբը և աւելին չի կրնայ ընել Ռուսնուք ալ:

Տարակոյս չկայ, որ Որբախնամը պիտի գտնէ հոն աւելի լայն ասպարէզ իր ջանքերը տրուելու տարիքը քան Ղառնան, ուր կը բերու սանձարձակ տիրապետութիւնը՝ իշական խոյր աքացիներով չէղծացնել փորձեայ Որբախնամին գերազանցական ջանքերը: Թէեւ այդ ջանքերու վճարական ու փայլուն յաղթանակին տուել սահմանափակ մնաց անիկա, իր չկամութեան բոլոր խաղաղութեանը մէջ:

Ուրեմն, Ռուսնուքի Որբախնամին և Արեւելեան խումբին վրայ է բոլոր պատասխանատուութիւնը, եթէ մօտիկ օրեր իրենց որբասիրական ձեռնարկին արձագանքն ըլլալու հաճոյքը չը տան մեզ՝ այս սիւնակներու մէջ:

Կ'սպասենք:

Դեւ ու Դեւ

ՍՈՒԾԵՆ ՆԱՄԱԿՆԵՐ

30 Օգոստ. 1901

ՀՐԴԵՂ ՍՈՒԾԵՆ ՄԷՋ ԵՒ ԱՆՈՐ ԵՐԱՍԿԱՅԸ

Մեր ընթերցողները ստուգապէս չի մոռցան, ու մոռնալու իրաւունք ալ չունէին, վերջին երկու ամիսներու միջոցին Մուշի մէջ ու անոր շրջակայքը գործադրուած բոլոր չարիքները: Մեր վերջին նամակին մէջ անոնց պատմութիւնը բերեց: Պէտք է խոստովանել թէ մենք ալ այս իրարու նմանող զէպերը պատմելու մեծ յոգնութիւն կ'զգանք, բայց սա վերջին շարժումներու կարգ մը իրողութեանց վրայ ծանրանալ հարկադրուած ենք անպատճառ մ'ալ մեզ հարցնելով մէկտեղ թէ այս ամենքը ինչո՞ւ եւ որո՞ւ համար գրեցինք: Այս մտածումները խոստովանելով, մեր սիրտը կը ճմլի: Աստուծուն օրը մեր հանդուրժած խնամութիւնները, սպանութիւնները, անտանելի տառապանքները մեր թըշնամիները բնաւ չեն գոհացներ, անոնց հրէշային երեւակայութիւնը, տառապանքի բաժակը մեզ սպասել տալու համար, նոր տանջանքներ կը հնարէ: Հայերը բոլորովին բնաջնջուած համար, կառավարութիւնը իրմէ վճարուած թուրք ու քուրտ շրջուն հրոսներ կազմակերպել, որոնք յաջորդաբար հայ գիւղերու վրայ յարձակելով, ապանեցին կանոնի չորս, Առաքել վեց, Պէքէօլէ ութը, Հուսէն չորս, Մէքէօլէ երկուք, Շէմալաք մէկ, Ալվարին մէկ, Վանաթա մէկ, Սէմալ մէկ, Մուշի վերին թաղին մէջ մէկ, ամենքը 29 Հայեր: Փոխանակ առաջուան պէս Հայերը պարզ կերպով կողոպտուել, հիմակ ապահովագոյն միջոց մը կը գործածեն: Նախ զանոնք կ'սպանեն, յետոյ անոնց բոլոր ինչքին տիրանալու համար: Մորիքը քաղաքը կ'արհի տուն: Մուշի մէջ, քանի մը անգամներ առաջնորդարաններու հայ թաղերուն վրայ յարձակել փորձեցին: Իր քաղաքին հայ, անպաշտպան խեղճ որբի մը պէս, ամեն վայրկեան իր տանջուելուն ու սպաննուելուն կարգին կը սպասէ:

Հայ ժողովուրդը ի՞նչ ընէ. իր գոյութիւնը ու պատիւը ի՞նչպէս պաշտպանէր, երբ իրենց հին զէնքերով Հայերուն կողմէ պաշտպանութեան իւրաքանչիւր փորձ, թուրք զօրագնդերու ուղարկումը առաջ կը բերէ, որոնք, կարծեցեալ յեղափոխականներ հալածելու պատրուակին տակ, ամեն բան կ'աւերեն:

Այս կերպով, Թիւպէր, որուն հայրը վարչական խորհրդոյն ան-

գամ Մուհամմէտ աղան է, Աշիթեթ-Բէլպաշիի քիւրտերու մէկ խումբին գլուխը անցած, Զքալու ու Քուրաւու հայ գիւղերուն վրայ յարձակեցաւ, հոտ «Քէտայի»ներ փնտռելու համար: Անմեզ ու զինաթափ գիւղացիներ ձեռնցին ու վիրաւորեցին հրացանի հարուածներով: Զանոնք չարչարելէ ու կողոպտելու ալ բան չի գտնելէ ետք, անոնց ոչխարներ քանդելով մեկնեցան: Այս ամենքը բացատրելու համար, բաւական է յիշել որ Մուհամմէտ ու Սուլթանը ամեն միւս լիւրճանի, քրիստոնեաներու գէմ ամեն վայրերու թիւն գործել ու գողութիւն ընել կը թույլատրեն:

Մուշի բնակիչները երկար խորհրդակցութիւններէ ետք, համարձակեցան Սուլթանին պալատը արտնջալ, միջնորդութեամբ հայ պաշտարարին, որուն վառութիւնը աւա՛ղ, շատ յայտնի է:

Ահա այդ յանդուգն գիւրմէին տրդիւնքը: Մուշի կառավարութիւնը, խոստովանելով հայ յեղափոխականներու զսպումին վերագրելու համար ամեն միջոցներ գործածելու կայսերական հրամանը կ'ընդունին: Այդ հրամանին գործադրութեանը համար, Պիթլիսի կառավարիչը Մուշ կը ժամանէ ու անմիջապէս յետոյ Ալայ պէյի և Թապուր աղաթի պաշտօնատարները ու Հայերուն գէմ իր ատեն լուրջեամբ քաջամարտի փրփու երեւելի մը, Հալիֆ Էֆէնտի, գաղանի հրամանաւ, տաճիկ ոստիկաններու հետ հայ գաղանքը կ'ընեն, ու սպանալիքներու ու տանջանքներու օգնութեամբ, բնակիչներուն, Սուլթանին երախտագրութեան գիր մը ստորագրել կուտան: Այդ հրամանին ընդգրկմանով մէկ քանի անձեր Մուշ բերուելով բանտ կը նետուին:

Ահա ինչ կերպով Սուլթանին համար գրութիւններ ստորագրել կուտան: Բերդակ գիւղին մէջ, օրինակի համար, բոլոր բնակիչները եկեղեցիի մէջ փակեցին, ու անոնց «բեղրով»ով լեցուն երեք սնտուկներ ցուցնելով, անոնց ըսին, ձեր գիւղը պիտի այրենք: Գիւղացիները ահաբեկ, գրութիւնը ստորագրեցին:

Հիմակ զօրագունքի մը ու քնիչ յանձնախումբի մը ժամանելուն վրայ կը խօսին:

Բնաւ տարակոյս չկայ թէ գործուած խոստովանեց ու սպանութեանց հետքերը ջնջելու համար այդ չըլլայ: Մուշեցի խել մը հայեր, Պէտեան, Միսաք, Միրիճանեան, Միհրան, Հաճի Յակոբ, Բօլէի Մընս, Վաղարշակ կոչակար ու շատ ուրիշներ, յեղափոխութեան պատկանած ըլլալու սխալ ամբաստանութեան հարուածին

տակ, փախելը խոհեմութիւն համարեցին, վասնզի կառավարութիւնը անմեղներուն ու յանցաւորներուն մէջ խտրիչ չի դնել, ու ինչպէս՝ այնքան անգամներ արդէն ըրաւ, անոնց հազար տեսակ տանջանքներ կրել կուտայ:

Թրքական բանտերուն վրայ խօսել չեմ ուզեր, որոնց անուշիկ պայմանները արեւելեան ծանօթ են: Մարտիք գիւղին բնակիչները դեռ բանտն են: Մուշի փողոցներուն մէջ հարաւար կիներ ու աղաքներ կը մուրան: Անոնց հրդեհուած գիւղին աւերակները դեռ կը միտն: Բանտերուն մէջ տիրող հիւանդութիւններէն հոգեկոտ մեռան: Տէլոհան Միքայէլ թուրք ոստիկանի մը խօսքովը բանտարկուած ու առանց ու եւ գրական փաստի, երեք տարուան բանտարկութեան դատապարտուած, բանտին մէջ մեռաւ:

Այս բոլորը գրապէս մեզ պիտի չը յուսահատէր, վասնզի գոնէ սա յոյսը ունէինք թէ թէեւ մարտիրոս մեր ժողովուրդը մինչեւ վերջը՝ մինչեւ մահ իր ազգային արժանապատուութիւնը անկողմ պիտի պահէր: Ահա, ահա նոր ահուկի յուսախաբութեանց դէմ կը գտնուինք:

Արդարեւ, Մուշի ու չրջակայններուն բնակչութիւնը, աւելի երկար ատեն իրերու այս վիճակը հանդուրժելու անկարող, ու այդ ահուկի կացութեանէն ազատելու համար, օրէնքս կրօնքը ընդունելու համար եւս կառավարութեան անունին խնդրագիր մը կը կընէ:

Կատարեալ բնաջնջումը այսքան ցած ու անպատուաբեր գործէ մը լաւագոյն էր:

Ահա մեր հիմնական կեանքը: Ուր կը գիտնէք, Դժբաղդութեան հոսանքը մեզ ո՞ր պիտի նետէ: Չենք գիտեր ու գայն գիտնալու հետաքրքրութիւնն ալ մեզ կը պակսի:

Մուշ 2 1/5 սեպտեմբեր

Մուշի բնակչութիւնը, հայ պատերազմի յանցաւորտ անդործութեանէն յուսահատ, իր փրկութիւնը

նուս օրթոթօքս կրօնքը ընդունելուն մէջ կը փնտռէ: Մեր ջանքերուն հաւանակ, վասնզի եկող ուս հիւպատոսը այս միտքով խնդրագիրներ ընդունելու յաջողեցաւ: Միւս կողմէն գիւղերուն հսկելու համար հոսկէ զօրագուններ ղրկեցին, աւելի կամ քիչ կասկածելի հայ գիւղերու մէջ զանոնք ցրուեցին: Կարգապահութիւնը հաստատուելու պատրուակաւ, Մասունի ու զաշտերուն մէջ հազորապետութիւնը խզեցին: Եւ ինչ որ ազդեցիկ կը պատրաստեն, վասնի որ ուս հիւպատոսը, Մուշի քի կացութիւնը ուսումնասիրելէ ու կրակի տրուած տունները ու աւերուած գաշտերը տեսնելէ ետք, բնակիչները հարցաքննեց: Միայնու կերպով Մուշ կը մնայ ինքը: Չորոք կը չըջի թէ Հայերուն ուս օրթոթօքս ընկելու դաւանափոխութեան գործը աւարտելու համար, նոր ուս անձեր պիտի գան:

Մուշ, 10-23 սեպտեմբ.

Գիւղերու հրդեհները, բնակիչներու սպանութիւնները, վերջին աւանդները արտերու աւերումները, ամեն նէն աւելի ծանր վնասող նահանգներուն մէջ զինուորական անազին ոյթ մը կը գործնացնելու պատրուակ եղան: Մասունի ու Մուշի զաշտավայրին միջեւ ճամբուն վրայ գտնուող գիւղերուն մէջ այդ զօրագունները ցրուեցին:

Մանրագոյն դէպքերու կապասուի:

Մուշի բնակչութիւնը հրամանին վրայ, բնակիչներուն յայտարարութիւն մը ստորագրել տուին թէ բոլոր այս գործողութիւնները «յիշատիականանք» անմեղական, ուղղակի գործն են: Վասնի որ ուսակալ հիւպատոսը, որուն ժամանակը արդէն իմացուցած ենք, Մուշի գեր-հիւպատոս կըլլայ: Բնակչութիւնը, յուսահատ, խնդրագիր մը անոր մատոյց, ուս օրթոթօքս կրօնքը ընդգրկել խնդրող, Հիւպատոսը անոնց մօտեցաւ դալու վրայ եղող մինչեւ ուս կրօնապետներու ժամանումը, խոհեմ լուծիւն պահել պատուիրեց:

(Բրո Արմէնիա)

«ՇԱՊ»Ը ՇԱՔԱՐԸ

1899ին գործուած մատնութիւն մը վերջապէս այսօր կը հրապարակուի. յեղափոխականի դիմակին տակ ծածկուած սեւ դէմք մըն ալ յանձին Լեւոն Սարգիսեանի, այսօր կը յայտնուի, իսկ վ. Շ. դեռ մուծին մէջ կը մնայ: Գոհունակութեամբ տեսնեմք թէ «Խրաւունք» այս խնդրոյն մէջ ալ դրակուն փաստերը և խոստովանութիւնները մէջ տեղ չի բերած փութկոտ վճիռ մը չ'արձակեց. խղճահար դատաւորի մը պաշտօնը նուիրեալ փաստերով և ուղիղ տրամաբանութեամբ հիւսուած իր վճիռը կարգաց Լեւոն Սարգիսեանի մը դէմ, իսկ վ. Շահրիմանի մասին ալ արդար ըլլալու նախանձանդութեամբ ներհուն հարցաքննիչ դատաւորէ մը սպասուած հարցումները ուղղեց, որոնց պատասխանները կրնան Շահրիմանն ալ մուծէն լոյսը բերել:

Կը շնորհաւորեմ «Խրաւունք»ը իր այս ուղիղ և քաջարի փութկոտ վճիռի համար: Այո՛, յանցաւորին հանդէպ անողոք, իսկ անիրաւուածին սատարող ըլլալ պէտք է:

Այս օրերս «Հոգեւոր»ի և 50 ֆրանքի հին խնդրով մըն ալ կըզբաղին տեղական թերթերը: Կը ցուցնու որ «Խրաւունք»ը այդ անհարկի խնդրոյն ալ երկու յօդուած նուիրեց, պատասխանած ըլլալու համար այն յիմար տրամաբանութեան որ մտքով Ղազարոսէն աւելի ազդատ մարդ մը մէջ տեղ նետեց և ազգին դժբաղդութեան խմբագիր գտնուող Կաթողիկոսի Պետրոս մըն ալ արձագանք

եղաւ, զիտակցարար «չապը չաքար և չաքարը չապ» ցոյց տալ ջանալով ժողովուրդին. այսպիսիներ կը կարծեն որ հայ ժողովուրդը այդպիսի յիմար է, իսկապէս՝ չէր արժէր որ «Խրաւունք» յարգ. խմբագիրը անոնց պատասխանելով զիջանէր, ցոյց տալու համար թէ ինք անկաշառելի է. արդէն ասոր պատճառով չէին բաւեր իր արտաքին սուլած ըլլալը, սկիզբէն մինչեւ վերջ ժէժն-թուրքերու դէմ իր մը. զած պայքարները և ուրիշ:

Նոյն իսկ ենթագրեց թէ իր յայտնի թշնամիներուն ընտանիք ճիշդ ըլլալին, ըստ որում Գուրպէթեան Օտէսէն՝ խնդրած ըլլալ որ ժէժն թուրքերը իրեն օգնութիւն հասցնեն. ասոր մէջ քննադատելի ինչ բան կայ: Հայ յեղ. Դաշնակցութեան կամքը նեկույաց. նոյն ժամանակ չէր որ 1897ին «Դրոշակ»ի երկրորդ թիւով հրաւեր կը կարգար հայ երիտասարդութեան Երիտասարդ — թուրքերին ձեռք ձեռքի տալ: Նոյնպէս այդ թիւաւ կանէն մինչեւ 1900, չորս տարի, «Դրոշակ»ը ժէժն թուրքերուն հետ մեղութեան և փոխադարձ անկեղծութեան հրաւիրած էր Հայ երիտասարդութիւնը: Արդ ինչո՞ւ մեղադրել Գուրպէթեանը 50 ֆր. նպաստ մը ուղած կամ ընդունած ըլլալուն համար, «Օսմանլը»ի խմբակին պէս ըստ «Դրոշակ»ի ալ զուտ յեղափոխականներէ. և այս առանց խաբէութեան, առանց գաղափարական շեղումի: Որքան հացը, խեղճ գաղթականներու դրամը չէ որ Գուրպէթեան իւրուցուցած է, իրեն դէմ անձնական հակառակութենէ մղուած, 50 ֆր.ին համար զինք մեղադրել փորձողներէ քանինք գիտեմ որ 1896ի հայ գաղթականութեան հո.

ԴՐՈՇԱԿ
ԵՒ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԿԵՐԸ

«Կար մի ժամանակ — ասում է թիւ 8 Դրոշակը, 1900 թուականի Հոկտեմբեր ամսին «Միութիւն թիւրքերի հետ» յօդուածի մէջ — որ մի՛նք էինք թիւրքերին անդադար միացած կուր հրաւիրում... որպէսզի նրանք աներկիւղ մօտենան, հասկնան մեզ եւ աջակցին ընդհանուր գործին»: (*) Ընդդէմ միանգամայն Դրոշակի ասածը, այո, կար, եւ բաւական երկար տեւեց այդ ժամանակը... 1897 Յունուարից սկսած (մեր առայժմ գիտեցացով), մինչեւ 1900 թւի հոկտեմբերը, չորս տարիներ, վճռալու թիւն չէ անշուշտ:

Թունւար 1897 թիւ 2 Դրոշակի ճակատին տըպէս «Օսմանեան Յեղափոխական Կուսակցութեան Երջարեակներ», որը գոյում էր. «Օսմանցիներ մի վախենաք, հարամկախակեր Համբար պատահածը զգելու կատարածութեան ատրիճանին հասած է, յայտնի է թէ կատարած չուն մը ուսմանը անհրաժեշտ է, ուրեմն եւ յեղափոխութիւնը բառը խորթ չի հնչէր ականջին: Այո՛, պիտի մոռնինք, պիտի կոտորենք, այրենք ու քանդենք, մարդէ վախ չունենք...: Հայրենակիցներ, եկէ՛ք Բ.

(*) Կր լսե՞ս վարդօ. Դրոշակը կ'ըսէ այդ. Դուրպէթեանը չէ ըսողը:

ԽՄԲ.

Դուրք, կամ նահանգներու կառավարական պաշտոնները լեցւեցէք, եթէ հարկ է, քաջեցէք բիրերը, սուրբը, մի վախնաք... զի մէկ մազերնույ զբաղող պատերուն հոգին մեր ձեռքն է: Ժողովուրդը քիչի մը ցոյց տուր Օսմանեան կորուղ: Օսմանցիներ գոնէ աստուծոյ երկիւղով ցնցւեցէք, գոռացէք մոնչեցէք օսմանցիներ. կեցած տեղերնիդ մի գաւառէ մնաք, օգնութեան հասէք տուրքերու տակ ճնշւած թշուառներուն, ծերերուն ու կտրիճներուն, որոնք քաղաքական իրաւ կամ անիրաւ պատճառներով կը ձերբակալուեն: Բզկեցէ՛ք... որպէսզի հրապարակը իսկոյն մաքրուի, որպէսզի բոլոր օսմանցիները, որոնք բանտերուն, աքսորներուն, նոյն իսկ Անատոլիոյ, Արաբիոյ եւ Բուսֆորի ստատաքեր վայրերուն մէջ, անօթութեան, թշուառութեան մէջ կը հիւծին, քիչ մը անդորրութեան եւ իրաւ տեսնեն: Ասկէջ վերջ պիտի արմատախիլ ընենք ու բռնակալ կառավարութիւնը եւ հաստատներ խորհրդարանը, գիտցած ըլլաք, մենք անմեղ ենք այլ եւս:

Թիւրքի յեղափոխութիւնն, ի հարկէ, այլ բան լինել կարող չէր, բայց եթէ «կոտորել, այրել, քանդել», եւ իր իղէալի մէջ, ոչ էլ ուրիշ բանի համար կարող էր լինել այդ թրքային յեղափոխութիւնը, բայց եթէ, որ «անօթութեան, թշուառութեան եւ բանտերու մէջ հեծողները, քիչ մը անդորրութեան եւ իրաւ տեսնեն» եւ յետոյ «խորհրդարան» հաստատուի...: Պրօպագանդայ, պատրաստութիւն կազմակերպւած ոյթ, մշակւած տաքսիք եւ կուսակցական որոշ ծրագիր — այս ամենը թիւրք «յեղափոխական»ի համար գոյութիւն չունեն:

Երբեք չեղարեւակաւի անմիջապէս տակը «Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմին» կոր. միջ Դրոշակի խմբագրութիւնը գրում է հետեւեալը. «Վերջապէս» վերնագրով: «Երկու ժամանակից ի վեր անհամբեր սպասող ձայնը վերջապէս հնչեց: Երջարեակաւ իր բացարձակ յեղափոխական ոգով, նոր զարգացող և կազմուած օսմանեան ազգի համար... օսմանեան ազգը ոտ է դրել այսօր իսկական յեղափոխական հողի վրայ... նա ձանձախ է իր զժողովրդական բուն արմատը... մենք դեռ ստալ կոչ արինք հասկացնել տալ մեզ մասնատական ամբոխին, մենք հրաւիրեցինք հայ յեղափոխական երիտասարդութիւնը ձեռք տալ Երիտասարդ թիւրքերին:» (**) որը մեր խորին համոզմամբ վաղ թէ ուշ, պէտք է իր ձեռքն առնէր յեղափոխական կարմիր դրոշակը: Այսօր տաճիկները յեղափոխական են զարմել, ուսմը ձեռքին: Մենք կ'ընդունենք մեզ պարզած ձեռքը, քանի որ այդ ձեռքը մեկնուած է անկեղծօրէն: (***) Օսմանեան յեղափոխական կուսակցութիւնը Բուսֆորի անցել է: Տաճիկ յեղափոխութիւնը կը լայնանայ: Ապաստւում ենք որ խօսքին յաջորդէ շուտով գործը:»

Այս էր Դրոշակի դիրքը: Կէպի Երիտասարդ թիւրքերը: Թոշններ այստեղ այն տարբորինակ հասկա-

(**) Անկանջը իւրանալու Դաշնակցութեան, կը լսե՞ս, Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմինն է հրաւիրողը:

(***) Երբ այդ ձեռքը կ'ընդունին, այդ ձեռքով ձոնուած 50 ֆր. օգնութիւնը չէ՞ր ընդունիր:

ԽՄԲ.

անձին տան հոս, վառնայի մէջ, Միս Յրայգէրէն մատուցում հոս աղքատին հացը թէ գողցան և թէ գողցնելու միջոցով եղան, Ա. գ. պիսիներ են ահա որ Գուրպէթ, եանի աչքին մէջ շիւղ ցոյց տալ կուզեն, մինչդեռ ես պատրաստ եմ շատերու հետ իրենց աչքէն գերան հանել, գերան, կը հասկընաւ ժողովուրդ:

Տեղեակ Ուն

ՀԵՐՔՈՒՄ

Հեռաւոր ընկերներու հարցում, ներսն պատասխանելու հարկին տակ, կուգամ հրապարակու յայտարարել թէ, «Իրաւունք» 77 թուով Յիւլիպէ գրկուած նամակին մէջ պատուած տնտեսող գէպքի մը առթիւ յիշուած Յակոբ փա. փառնանը ես չեմ, Ոչ աղքատախնամի գանձապետ եմ եղած և ոչ ալ յարաբերութիւն ունեցած եմ և կամ ունիմ այդ խմբակին հետ:

ՅԱԿՈԲ Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փ. Պօլիս, Շ. Նոյեմբեր

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Հայրապետը վերջերս Թիֆլիս գացած ըլլալուն առթիւ, էջմիածնի տպարանին դործիքները կամբողջացնէ և յառաջիկայ յունարին պիտի ակսի Աստուածաշունչի նոր տպագրութեան:

— Ռուսիոյ համալսարաններուն մէջ բարեփոխումներ մտցնելու համար Յանձնաժողով մը կազմուած է կրթական Նախարարութեան մէջ և այդ Յանձնաժողովին անդամ նշանակուած է Տ. Եղեանց:

— Բեդերսպուրկի մօտ կոլտա

կղզիին մէջ կը կառուցուի Հայոց Անկիւանոցի շէնքը, հայ տիկնոջ մը ձեռքով: Առջին շէնքը պիտի ըլլայ սա Բեդերսպուրկի մէջ զուտ հայ ճարտարապետութեան ոճով կառուցուած, ինչպէս են մեր հին եկեղեցական, վանական եւ տնտեսական շէնքերը: Այս անկիւանոցին յատկապէս մրցումի դրուած ըլլալով, մրցանակը չուհած է Ռուս ճարտարապետ Ս. Քոչետով, որ իր գործովը տպացուցեր է թէ Հայ ճարտարապետութեան բուն ոճը նոյն իսկ կովկասի հայ ճարտարապետներէն աւելի լաւ ստիպած է:

— Երանոթ Հայտեանց ռուս հրապարակագիր Վէլիշով, որ կովկասէն հեռացուած էր իր Հայերուն գէժ գրածներուն պատճառաւ, Նաքի Շատրուան անունով թատերախաղ մը գրած է, ուր կը գովէ կովկասի վրացիները և սատիկ կը հարուածէ հայերը, աղտոտ բարքեր վերագրելով ասոնց: Մոսկուա թատրոնի մը մէջ այդ խաղին առաջին ներկայացմանը տան խաչատուր վարդանեան անունով հայ մը սուլած է և դատի ենթարկուած: Վարդանեան դատարանին առջեւ խոստովանեցաւ թէ այդ սուլած է ինք, նկատելով որ ապօրէն չէ թատրոնի մէջ սուլելը, ուր հանդիմանողները ծափահարեն, իսկ չհանդիմանողները տհաճութիւնը սուլելով կրնան յայտնել, բաւական է որ կարգը չի խանգարուի: «Դատարար. — «Որչափ ուժով սուլեցիք:» Ամբաստանեալ. — Շունչս ուրբան որ կը հանէր. բոլոր շունչովս:» Հայը միայն հինգ րուպլի տու գանձի դատապարտուեցաւ:

— Հայ մասնագէտ Տիար Արամ Երաման, որ Պոլսոյ Երկրագործական պաշտօնատան մասնագի.

տաց ժողովին նախագահն է, ի վարձ իւր տաղանդին Պալայի աստիճանին բարձրացաւ:

— Թիֆլիսի հանգուցեալ հայ յազգի քաղաքապետ Եւանկուլեան իր կեանքը 40,000 րուպլի ապահոված ըլլալով, ժառանգորդները այս օրեր ստացած են այդ դրամը:

— Տ. Գեղամ Տ. Պետրոսեան Ա. Էքսանդրապոլի քաղաքապետ ընտրուել է 2ի դէմ 35 քուէով: Տ. Մինաս Պալապանեան Նոր Նախիջեանի և Տ. Սարգիս Շամխախանց Շամախի քաղաքապետ: — Դուրէժի մէջ արգէն կազմուած երկու հայուհեաց Բարեգործական ընկերութիւնները միացեր են «Թաւրիզի Հայուհեաց Միացեալ Մարմին» անունին տակ:

— Մեր ընթերցողաց ուշադրութեանը կը յանձնենք ներկայ թրւիս մէջ, թերթօնի ձեւով հրատարակուող, քննադատականը «Դրօշակ և Երիտասարդ Թիւրքեր»-ը վերնագրով, որ ընկերվարական Հանդէսին մէջ հրատարակուած էր 1900ին. բայց այսօր ալ անոր շատ մը կէտերը մեր ընթերցողաց համար հետաքրքրական են. կարծէ որ կարդան:

ԻՐԱՆԻՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Վ. ՄԻՆԱՍԵԱՆ. — Ստացանք ձեր նամակը: Ձեր բաժնեգիրը թէեւ դուք վճարել էք ինչիկ Պէտրիշեանի, բայց նա մեզ ահիւ մը չէ գրկած, ու չէ իսկ իմացուցած: Այժմ ինչիկ Պէտրիշեան անուն վարդը մեր գործակաճարը չի, նա ցարգ պարտադանց գտնուած է հանդէպ մեզ:

— Չի վճարող ԲԱՍՆԱՐԴՆԵՐԸ չի կարծեն թէ մեր համբերութիւնը անսահման է. մօտ օրէն հրապարակու պիտի յիշենք իրենց անուանները:

ԱՐՏԵՄԻՍ

ԸՆՏԱՆԵԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՍՏԱՆԱՆԴԵՍ

ՕՐԳԱՆ ԻՐ. ԳԻՐՈՒ ԶԱՅ ԿԱՆԱՆՑ

Պիսի հրատարակող
ԻՐ ՍԵՊԱՆԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ ՄԷՋ

1 ՅՈՒՆԻՍԻՍ 1902

Բաղկացած 32 մեծադիր երկխմակ էջերի

ԲԱՆԵԳԻՆԸ ԿԱՆԱՆԻ

Երկարութիւն համար տարեկան 40 դր.

» վեցամսեայ 25 »

Արտասահմանի համար

տարեկան 12 ֆրանք:

Հիմնադիր. Տէր և Տեղեկ Խաչատուր ՕՐ. ՄԱՐԻ ՊԵՏԼԵՐԵԱՆ

Հասցէ՝

Խաչատուրեան Արտիսի հայ հանդէսի

(Երկրպագ)

Գանիք


ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Այս շաբաթ գիշեր, ժամը ճիշդ 9ին, Վէսէլօ հայ դերասանական խումբը առաջին անգամ պիտի ներկայացնէ «ՍՊԱՆԻՍԻ ՄԱՐԿԵՆԻ»-ը տրամ—գօմէտի 4 արարուած եւ ծիծաղաշարժ գաւազն մը:

Երգ եւ պարերը Խաչատուր խմբին կողմանէ:

Կրակի գիշեր՝ «Ա.Զ.Ե.Լ. Ե.Լ. ԿՈՒՂԱՐ» տրամ—գօմէտի 4 արարուած եւ ծիծաղաշարժ գաւազն մը:

Նոյն խումբը՝ յառաջիկայ շաբաթ պիտի ներկայացնէ հայերէն լեզուաւ, ՎԱՀԱՆ ՄԱՐԿԵՆԻՆԵԱՆ բարեխառնակ Մ. Պէտրիշեանի յօրինած ազգային թատերախաղը:



ցողութիւնները թէ մի քանի թիւրքերի յայտարարած «կոտորենք, աչիքնք եւ քանդենք» Դրօշակի համար բացարձակ յեղափոխական ոգի է եւ կամ թէ մի որ եւ չըջարեալան «նո» դաւադրուի է կազմուած օսմանեան ազգի համար: Առ այժմ մեզ հետաքրքիրն այն է որ Դրօշակը «լսեց վերջապէս սպասող ձայնը եւ ընդունեց պարզա՝ ձեռքը»: Դրօշակը լսեց այդ ձայնը, առանց ինքն իրան հաշիւ անգամ տալու թէ ի՞նչ է ուզում ասել այդ ձայնը. ո՞րն է նրա ուղղութիւնը եւ ծրագիրը, ի՞նչ է հաստատուելիք «խորհրդարանը»: Դրօշակը ընդունեց այդ ձեռքը, առանց հասկնալու անգամ թէ ո՞րտեղ պիտի գործէ, ի՞նչ պիտի անի եւ ո՞ր կազմակերպութեան մէջ: Ի՞նչ մի չըջարեալանով Դրօշակը մինչեւ անգամ յայտարարեց թէ «օսմանեան աղբը ոտք է դրել այսօր, իսկական յեղափոխական ուղիի վրայ, եւ իր խորին համոզմամբ երիտասարդ Թիւրքիան պէտք է իր ձեռքն առնէր յեղափոխական կարմիր դրօշը»:

Չորս ամիս յետոյ (թիւ 8 Մայիս 1897) Դրօշակը գծողուած է Միզանից, (*) որովհետեւ վերջինս, Յոյն-տաճկական պատերազմի առիթով, կողմնակից էր Թիւրքիայի պաշտպանութեան, եւ յայտարարում է որ հայերից թող «չանգիր չսպասեն պաշտպանելու համար Թիւրք պատուական ամբողջութիւնը»: Թէ եւ միշտ էլ պարզ է եղել, սակայն այս անգամ

կօնգրէս կերպով պարզ է որ Երիտասարդ Թուրքիան ճշմունք է պահպանել թուրք պատուական ամբողջութիւնը, իսկ հայ յեղափոխականները ճշմունք են ինքնավարութիւն ստանալ: Չգիտեմ, այս մասին արդեօք չէր մտածել Դրօշակը, երբ չորս ամիս առաջ ողջունում էր «բայաւթակ յեղափոխական ոգեով եւ դարապետ կազմող» Թիւրքերի չըջարեալանը: Դրօշակի այս դժգոհութիւնն անցաւ աննկատ, իբրեւ միջանկեալ եւ երկրորդական մի գէպք:

Մէկ տարի յետոյ (թիւ 5 Մայիս 1898), Դրօշակը գրում է «Երիտասարդ Թիւրքիան» վերնագրի տակ: «Քսան տարուց վեր Երիտասարդ Թիւրքիան երբէք գործով չըրողքեց: Նրանք եղան ազատամիտներ եւ խաղաղականներ, եւ դրա համար էլ մինչեւ օրս մենք սովորել ենք սկէպտիքօրէն վերաբերելի գէպի նրա ոյժը, ընթացքը, դաւանած սկզբունքներն ու բարենորոգչական լրջութիւնը: Սակայն այսօր դրանց մէջից յեղափոխական տարրեր հրաւէր են կարգուած միանալ մեզ հետ: Մենք սիրով ընդունում ենք օսմանը հրաւէրը:» (**) Ի՞նչպէս: Քսան տարի անգործ եւ Դրօշակը «սկէպտիքօրէն» է վերաբերուած գէպի նրա ոյժը, Հապա «Օսմանեան ազգի իսկական յեղափոխական հողի վրայ ոտ դնելը»: Բայց Դրօշակը երկրորդ

(*) Դրօշակ այս կը գրէր Օսմանցի թերթին զուտ հայասիրական եւ յեղափոխական ուղղութեան միջոցով: Այդ Օսմանցի խմբագրութիւնն էր որ Հոգնուրի արտաբանուած խմբագրին եւ գրաշարին 50 ֆր. նպաստ կը ղրկէր նոյն թուականներու:

անգամ ընդունում է պարզաւ ձեռքը, միութեան անունով:

Մէկ ամիս յետոյ (թիւ 6 Յունիս 1898), Դրօշակի «Առաջին քայլ» յօդածն ասում է: «Դաշնակցութիւնը հէնց առաջին օրից քարոզել է որ օսմանեան պետութիւնը կազմող բոլոր ազգութիւնների յեղափոխականները համախմբեն մի դրօշակի շուրջ, ներկայ կառավարութիւնը տապալելու համար: Այդ միտքը դժբախտութեամբ է յաջողութիւն գտնում, որովհետեւ, թէեւ պարզ միտք, բայց «հեշտ չէ ոչնչացնել ազգերի մէջ դարեւրով պատւաւած ատելութիւնը»: Այսօր այդ ազգերի մտաւոր ոյժերը սկսել են մօտենալու քայլեր անել համախմբութեամբ գործելու: Մենք յոստախաբ չենք լինի, ուստի եւ հաւատով պիտի նայինք ապագային ու ինքզնին իր յամբարաշխութեան ձգտումը: Օսմանցից յետոյ, Մէջլէթիթին է համախմբել գործակցութեան հրաւէր կարգուած, նոյն ձայները լսուած են եւ այլ կողմերից: Այս երեւոյթով մենք հրճուած ենք. ցանած սերմերը ծլում, ծաղկում են, օրոնք վաղը կ'ուռնան եւ պտուղ կ'տան: Ընդհանուր համախմբութեան հետ մենք քարոզել ենք եւ մի լրացուցիչ գաղափար — ֆէտիտիքի կազմակերպութիւնը Թիւրքիայի ազգութիւնների: Համախմբենք, ձեռք ձեռքի տանք եւ կուենք մեր միակ իսկական ու ռիսկիւթ թշնամու գէժ, մի դրօշի տակ եւ յաղթութիւնը մերն է»:

(Շար.)

ՀԱՆԴԵՍ

—(—)

(*) Միզան եւ անոր խմբագիր Մուրատ պէյը առաջին անգամ հարուածող հայը Գուրպէթեանը եղաւ Իրաւունքի մէջ. որովհետեւ այդ թուրքը հայերը կը հարուածէր եւ յեղափոխութեան ալ գէտէր:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԵ

ԹԻԻԻՐՔԻՍ

Եւանեա վիսայեթիտէ պիր չօգ պուկար քէօլէրինտէն թիւրք հիւքիւմէթի սիւստէ տէրօլար պուկար մուշ վէ պու սէպէպլէ բէք չօգ պուկարարը տէրօլարէ հասպո իթմիշ օլտըզը Սթանպուլտան պա թէլէկրաֆ պիւտիւրիւմիշ տիր :

— Կիրիտի հիւսայեթիտէ ալթընէ ալմըշ օլտն տէօրթ պէօլիւք տէվ-լէթլէրին Սթանպուլ էլշիլէրի Բը-րէնս Եօրկիին թէլիֆլէրինտէն պիր զըսմըն թէտգըզ իթմէք իշին տգտը սէկիս իթմէքտէ օլ-տըզլարը թէլէկրաֆ հապատիսա թընտան տըր :

Իշպու թէլէկրաֆըն մտալըն-տան վէ սայիր էվրօքա կաղէթա-լարըն պէյանընտան անլաշլուրըն իւզրէ, տէվլէթլէր Բըրէնս Եօրկի-նին պաղը թէլիֆլէրի սալա նա-զարա ալմալընար : զիրա Բըրէն-սին արզուսը իւզրէ՝ Կիրիտի Եու-նանիսթան իլէ տօղրուտան պիւ-լէշտիւմէք հալինտէ, Պուկարիա վէ Սիւքիւտա տալի Մաքեթանիա իշին քէնտի արզուլարընը իճրա իթտիրմէք իսթէյնէքլէր իտի, վէ Մաքեթանիա զօմիթէսի սէր-պէստիլէթլէ իշլէյնէք տի : վէ նէթիւնէսի Պալքան տէվլէթլէրի վէ թիւրքիս պէյանիտէ է՛ն միւտհիշ մէնզարէլէր զուհուր իտուպ, սու-հը ումուսի իսլալ օլուր գօրգու-սը իլէ տէվլէթլէր Կիրիտի պիր-լէշտիւմէք մէսէլէսին թէլէթիւր ի-տէրէք, պաղը եէնի մէղուսիլէթլէր վէրմէքլէ չիմտիլէք իշի գալաթ-մաք իսթէյօլար :

Պիր ըիվայեթէ կէօրէ, Կի-րիտտէն էվրօքա մուհաթըզ ա-քէրլէրի չէթիւպտէ, տիլէրին եէ-րինէ Եունան սաքէրի կէլէքէք ի-միշ :

— Պէրուլտա իսլալարըն իւ-րիսթիյանլարա գարշը տտալէթի արթմըշ օլուպ, եէնիտէն մուգա-թէլէ վէ միւսատէմէլէր չօղալմըշ : իսթիլալ զուհուր իթմէսի հազըն կէօրիւլիօր :

— Շքօտեա (Ալպանիա) վալիսի վիսայեթիտէ ուլկունըզըզլարըն էօնիւնիւ ալապիլմէք իշին գուվ վէի սաքէրիլէ իսթէմիշ իսէտէ եօլ-լանըլմալը վէ պու սէպէպլէ վալի իսթիֆասընը վէրմիշ տիր :

— Պապը Ալի 50 միլիոն ֆր-Օսմանլը Պանդասընտան եէնիտէն իսթիգրալ իթմէք իսթէյօր պան-գու կառաթ թալէպ իթմէքտէ օլ-տըզընտան, պէյնլէրինտէն միւզէ-քէրէ ճէրէյան իթմէքտէ տիր :

— Բուհպան շիրքէթլէրի իշին Ֆրանսատա թէլէսիս օլընան հէնի գտնուսա իթաթ իթմէք իսթէ-մէլէն րահիպլէրին թիւրքիյա կէլուպ եէրլէշմէլէրինէ միւսատէ օլընմամալը րուս իշիսինին Սուլ-թանը թէլիֆլէրինտէն իլէրի կէլ-

միշ օլտըզընը պաղը Բարիզ կա-զէթալարը հազմագտա տըրլար :

— Մաքէթանիա զօմիթէսին սապրգ ըլիսի Մ. Պօրիս Մարա-ֆօֆ Բօմայա կիթմիշ օլուպ, Ար-նալուսարըն օրատա պուլընան մէրքէլի զօմիթէսի իլէ պիր իթ-թիֆաք թէլէքիլ իթմէքլէ ումուսի ըսեան չըգարմաք մագսէտինէ խըտմէթ էլլէմէքտէ պուլընտըզը-նը կաղէթալար հազմագտա տըր-լար :

— Սթանպուլ ճինայեթ մահքէ-մէսի աթիտէքի գարարը իւան իթմիշ տիր :

« Էշխասը միւզիլէտէն օլմաք թէօնէթիլ իլէ մահպուս պուլը-նան Արտաշ Անթիգաճանըն, Յակօր Լամպաճանըն, Ալիքսան Դալպանտեանըն, Յովհաննէս Շամ-լընանըն, Վառաշպազ Սիւրբեա-նըն վէ Նշան Միքայէլիանըն շէ-րիքի ճիւրմէրինտէն Հրանտ Գա-րակէօգեան էլան տէրտէսթ օլըն-մամըշ օլուպ, 10 կիւն մէօնէթ վիլիւմիշ տիր : Էկէր պու միւտ-տէթ զարֆընտա քէնտիսի կէլուպ թէլիլմ օլընմաք իսէ, նիզա-մա իթաթթօրը նազարը իլէ պա-զըլուպ, հուգուգը մէտէնիլէտէն իսգաթ օլընմաք վէ զըյապէն մուհաքէմէսի իճրա օլընուպ, մալ-լարը միւսատէրէ օլընմաք :

Ատլիլէ վէ զապթիլէ մէմուր-լարընա անը կէօրտիւքլէրի եէր-տէն թուլթալարը իշին էմիր վէ-րիլմիշ տիր : »

ԹՐԱՆՍՎԱՍԱ

ժէնէրալ Տէվէթ 6000 քիշիլիկ պիր զուվլէթ իլէ Օրանթըն շի-մալ զըթաւսընտա պուլընըօր : Տէ-վէթին թահիլը զօմանտաւսընտա պուլընան սաքէլէրին 1500ը ին-կիլիլ թապաալը պուլընան պօե-լէրտէն միւթէլէթլէ տիրլէր : Շէ-տիւ պիր միւսատէմէ պէքլէնիլ-մէքտէ տիր :

— Լօրտ Քիշնէրին նամիճաղըզ պէհանէսի իլէ ինկիլթէրայա կի-տէճէկիլիլ Լօնտար կաղէթալարը հազմագտա տըրլար : Շալէթաթ կէօրէ, ինկիլթ մէճիսի վիւքէլա-սընտա իսթիլալէք էֆքեար հասըլ օլմասընտան տօլալը Քիշնէր կէրի չաղըրըլուպ, պաշգասը թալիս օ-լընմաք ըմըշ :

— Ինկիլիզ օրտուկիւհընտա թէ-ճէմիւ իտիլէն պօեք էհալիսի չըպալաք վէ եարը աճ սաղլանըլ-մասը սէպէպլէ խասթալանուպ թէլէթ օլմագտա տըրլար : պու սէպէպլէն էվրօքա էֆքեարը ու-մուսիլէսի հիտտէթ քէսպ իթմէք-տէ տիր :

— Պիր Ալման վաբօրը Պօեթլէ-րէ սիլահ վէ մուհիւթաթ կէօթիւր-մէք շիւրհէսի իլէ ինկիլթլէրտէն թուլթուլմուշ տըր : վաբօրա 4 տտէթ թիւր վէ մուհիւթաթ պու-լընմըշ տըր :

— Սուլհը ումուսի իշին Լա Հէյ տէ թէլէքիլ օլընմըշ օլան հաքիմ հէյէթի սօն տէֆա թէճէրմիւ օ-լընուպ : Պօեթլէրին թէլիֆլէրի թէտգըզլէ, Ճէնուպի Աֆրիգա մուհարէպէսի իշին թէլիսաթ իթմէկէ քէնտիսիլի սէլահիլէթ-տօր կէօրմէմիշ տիր :

ՏԱԽԻԼԻԹԷ

Սօպրանիէտէ 120 միլիոն իս-թիգրալ մէնէլէսինտէն տօլալը իսթիլալէք էֆքեար հուսուլա կէլ-միշ տիր : Դսթիֆա իթմիշ օլան Սօպրանիլէրիսի Մ. Կէշօֆըն թաւաֆտալարը իսթիգրալ ճէտ-վէլինէ գարշը կէլմէքտէ տիրլէր :

Սթանպուլ վէ Սթօլիւմ գար-թիլէրի տալի իսթիգրալ ճէտվէ-լէրի ըտտ իթմէք իսթէյօլար :

Մէճիլիսի վիւքէլանըն իսթիֆա-սը պէքլէնիլիօր :

ԵՌՆԱՆԻՍԹԱՆ

Ալիսանըն « Ասթի » վէ « Աբօ-բօլիս » կաղէթալարը՝ քիլիսէլէրտէ Աւետարանը եէնի րուճա իլէ օ-գուճաք թիլիֆ իտէն պէնտլէր հազմը օլտըզլարընտան, Տարիւ-ֆիլիոն (համալսարան) թալէպլէ-րինտէն 1000 քիշիլ մէղքիւր կա-զէթալարըն իտարէլանէլէրի իւ-զէրինէ հիւճու իթմիշլէր վէ թու-լէպէտէն պաղըլարը մէղքիւր ի-տարէլանէլէրի եազմաղա գալ-զըշմըշլար : Բօլիսիս բէք միւշ-քիւլաթլէ նիւմայիշմիլէրի տաղը-տապիլմիշ տիր :

— Ալիսանտան ալընան տիւնքի թէլէկրաֆա պիւսէն, « Ասթի » վէ « Աբօբօլիս » կաղէթալարըն իտա-րէլանէլէրին ժանտարմալար մու-հաֆաղա իթմէքտէ տիրլէր : զի-րա էհալիսին հիւճուլընտան էլան գօրգուլմագտա ըմըշ :

— Ալիսա Սինօզը Աւետարա-նըն եէնի րուճայա թէրճիմէ ի-տիլմէսինի մէնն իթմիշ տիր, ֆազաթ թալէպլէր նիւմայիւշ վէ ըլթթէսթլէրինէ տէվաթ իթմէք-տէն կէրի տուրմայօլար :

ՄԻԻԹԷՆԷՎԼԻԹԷ

Հունգարիատա Շէքլին էթօնօմի պանգասը իլանը իֆլուս իթմիշ տիր : Սէքիլ պինտէն զիյատէ ֆու-գարա ֆամիլիալար հիւսնի իտարէ իլէ պիրէր ալ տրթըրմըշ օլտըզ-լարը ըսարալը մէղքիւր պանգայա թէվտի իթմիշ օլուպ, պու կիւն, չու սօն իւմիւտլէրինի տալիլ զայա իթմիշ տիրլէր :

— Բուճէն վաբօր շիրքէթլինին վա-բօրլարը նոյիս 24տէն իթիպա-լէն Քէօսթիլմէտէն Սթանպուլա կիտուպ կէլմէլէ պաշլայաճաղար տըր :

— Սըրպ գրալիցասը Տրականըն վէֆաթ իթմիշ օլտըզընա տայիր չըգմըշ օլան շայէթաթ րէսմէն թէլէքիլ օլընմըշ տըր :

— Մըսըրտա եուճուրճաք իլէ-թիինն էսէրի գալմատըղը րէսմէն իլան օլընալ : Ապրիլ 7էն պէրու 191 քիշիլ թուլթուլմուշ վէ պուս-լարտան 94ը էօլմիւշ :

ԹԻԻՃԱՐԻՅԵ

ՉԱԽԻԼԻԹԷ

ՊՈՒՂՏԱՅ		
Վալիս իլպ. 49.53 հքթ.	6.40/7.—	
Արապա իլպ. 48-58 հքթ.	8.40	
ԱՐԱՅ		
Վալիս 100 քիլո	8.40/8.50	
Արապա 35-45 իլպ. հքթ.	4.60/5.80	
ԵՌՆԱՆԻՍՏԱՆ		
Արապա	4.—/4.80	
ՖԱՍՏՈՒԼԻՍ 100 քիլո	15.—/22.—	
ՉԱՎՏԱՐ	6.40/6.80	
ՄԻՍԻՐ		
Արապա իլպ. 54-58 հքթ.	7.40/8.—	
Վալիս իլպ. 100 քիլո	9.40/9.60	
Պու ֆիլաթլար հաշ մալլար իշին տիր. գուրու միսիր ֆիլաթլը	8.20/8.60	
ՏԱՐԸ	5.60/5.80	
Կիւնտէ 700-800 արապա կէլմէք-տէ տիր. վալիս 50-55 :		
Վալիս մուսալէսի ալթուս ֆը-րանքլէ, արապա կիւմիւշլէ, նաբօ-լէտն 22.40 հիսապ իլէ :		

ՊԱԳԱՆԻԹԷ

Վարնա քիւսաղընտա պաղգալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթլը, ալ-թուս ֆրանք իլէ :	1.60/1.85	
ԳԱՂՎԷ		
Շէֆէր Բօման	—/57	
» (Քէսմէ) սանտըզ	29.—	
Բիւրիւն ճարն չուլալը	35-38	
» Ֆիլիպէ »	35.—	
» Ինկիլիլ »	27.25	
» Բիզօն »	45.48	
ԿԱԶ Սանտըղը	7.—	
Չէթթիլ ՆԱՂԸ քիլո	—/95/1.08	
ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻԻՍ	—/35	

ԲԱՄՈՒԻԹ

Վարնա մաղաղաւստա իւլիք սա-թըլարը :		
Ինկիլիլ իւլիկի Ն. 8-14	9.50	
» Ն. 18-24	21.—	
Եէրլի իւլիք Ն. 8-14	9.—	
Աթըլմը բամուր հօդա	2.—	

ՍԱՐԻՍԻԹԷ

Նաբուլէն 22 ֆրանք 40 սանթիւ		
Օսմ. լիւրալը 22.95 ալթուս ֆրանք		

ՀԱՅ ՎԱՃԱՄԱՏՈՒՆ ԵՂԱՐԱՐ ԵՎ ՔԵՍՏԱՆԵԱՆ

Կալանքարի, աւնե տեւակ կօ-շիկ եւ Բուսակաւ Լաւոկի-Կա-լանք

Վառնա Ուլիցա Բիւսակաւ Պուլ-կար աղը, պանգայէն վեթի կողմը Սոյն վաճառատուն 15 տարինքի ի վիւր Ռուսուրի մէջ իր ուղղամու-թեամբը ու ապրանքներուն մաքու-թեամբը ծանօթ լինելով. այս օրերս մասնաճիւղ մըն ալ Վառնայի մէջ հաստատած է, եւ կուգայ. յայտա-րել թէ քաղաքիս մէջ իր նոր ստա-նալիք յաճախորդները ըստ ամենայնի գոհ ընելու համար պիտի ջանայ կա-րելի եղածին չափ զիւրաւատելի գի-նեքով մաքուր ապրանքներ տալ իրեն զիմոզներուն :

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница «Взаимность», Варна